# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 89-Լ

«01» 11 2023 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 5 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2012 թվականի մարտի 2-ի N 5 հրամանի հավելվածի 63-րդ կետում կատարել լրացումներ՝ հետևյալ բովանդակությամբ՝

1) 1-ին պարբերությունը՝ «Արական սեռի դատախազները աշխատանքի վայրում կամ պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս՝ համազգեստ չկրելու դեպքում, կրում են դասական (գործնական) ոճի կոստյում, վերնաշապիկ և կոշիկ,» բառերից հետո լրացնել «իսկ դատական նիստին՝ բացառապես դատախազի համազգեստ,» բառերով,

2) 2-րդ պարբերությունը՝ «Իգական սեռի դատախազները աշխատանքի վայրում կամ պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս՝ համազգեստ չկրելու դեպքում, կրում են դասական (գործնական) ոճի հագուստ (ցանկալի է կոստյում) և կոշիկ,» բառերից հետո լրացնել «իսկ դատական նիստին՝ բացառապես դատախազի համազգեստ,» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Հայաստանի Հանրապետության

զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ